ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը շնորհավորական հեռագիր է հղել ՀՀ նորանշանակ վարչապետ Արամ Սարգսյանին:

Հեռագրում մասնավորապես ասվում է. «Հավատում ենք, որ Աստծու օգնականությամբ և մեր ժողովրդի զորակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարծանագրի որոշիչ և անբեկանելի ձեռքբերումներ հայրենական մեր կյանքի բոլոր բնագավառներում:

Թող Տիրոջ օրհնությունը, երկնառաք հույսը, հավատը և սերը ուղեկից լինեն Ձեզ, օգնական և ապավեն՝ պարգևելով արևշատություն, եռանդ ու կորով և հայրենաշեն գործոց լիակատար հաջողություն»:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ